

## ՀՈՒՆԱՐԵՆ ԵՎ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հին և նոր հայերենի միջև ընկած ժամանակաշրջանի (12–16-րդ դդ.) լեզուն միջին հայերենն է: Այն հիշյալ դարերից ավանդված գիտական, գեղարվեստական, բժշկական և պատմական գրականությամբ լեզվական ամբողջությունն է, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդին: Հայոց լեզվի այս շրջանի բառային կազմն ունեցել է մշտական զարգացման և հարստացման ընթացք արտահայտելով ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները: Նրա բառապաշարն ավելի հարուստ է, քան գրաբարինը: Այստեղ արժանազորված են նորակազմություններ, արմատական բառեր, որոնք վերցված չեն գրաբարյան շրջանից և գրական լեզու են թափանցել բարբառներից, այլ լեզուներից կամ հին բառածների նոր իմաստավորումներն են:

Մեր նպատակն է ներկայացնելու եվրոպական լեզուների, մասնավորապես հունարենի և ֆրանսերենի ազդեցությունը միջին հայերենի վրա: Ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ներմուծված եվրոպական միավորները քանակապես թեև զիջում են արաբական, պարսկական և թուրքական փոխառություններին, սակայն հայոց լեզվի, հատկապես միջին հայերենի բառապաշարի վրա զգալի ազդեցություն են թողել: Զենարկվող ժամանակահատվածում եվրոպական լեզուներից ներմուծված փոխառությունների թիվը հասնում է 679-ի: Դրանցից 300-ը փոխառված են հունարենից, 145-ը ֆրանսերենից, 103-ը լատիներենից, 86-ը լեհերենից, 33-ը իտալերենից: Անճշան թիվ են կազմում ռուսերենից (6), գերմաներենից (4) և ռումիներենից (2) կատարված փոխառությունները:

Ըստ միջին հայերենի վրա ունեցած իրենց ազդեցության՝ եվրոպական փոխառությունները դասակարգվում են հետևյալ կերպ. *փոխառություններ, որոնք հարկավոր էին լեզվին, տվյալ ժամանակաշրջանում, և անհարկի փոխառություններ:*

Առաջին խմբի բառամիավորները տարբեր կարգի շփումների (տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային և այլն) հետևանքով կատարված փոխառություններ են, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում հանդես են եկել որպես նոր հասկացության կրողներ և նպաստել միջին հայերենի բառաֆոնդի համալրմանն ու հարստացմանը: Լեզվի զարգացման տվյալ հատվածում դրանց սեփական համարժեքների ստեղծումը կամ անհնար էր, կամ ոչ նպատակահարմար: Այս բառամիավորները լայնորեն օգտագործվել են միջին հայերենով ավանդված հարուստ գրականության մեջ: Նշենք դրանցից մի քանիսը՝ *բադրիկ* < լատ. *patricius* «պատրիկ», *ատրիճուկ* < իտալ. *artichioeco* «կանկառ», *հրոշ* < լեհ. *grosz* «դրամական միավոր, գրոշ»:

Միջին հայերենին անցած *անհարկի փոխառությունների* շարքին են դաս-

վում եվրոպական լեզուներից ներմուծված այն բառամիավորները, որոնց համարոժեքները կային արդեն միջին հայերենում, և դրանց փոխառելու անհրաժեշտությունը չկար: Այս բառերը նոր հասկացությունների կրողներ չէին, չէին կարող արդեն առկա բառերի հետ հոմանշային շարք կազմել, չունեին լայն կիրառություն և չէին նպաստում բառապաշարի հարստացմանն ու զարգացմանը: Լեզվի զարգացման հետագա շրջանում փոխառյալ բառերի և դրանց համարոժեքների պայքարի արդյունքում մեծ մասամբ հաղթանակեցին հայերեն բառերը: Արդյունքում օտար միավորներն ունեցան կարճատև, վաղանցիկ գործածություն: Միջին հայերեն ներմուծված այս բառամիավորները, սակայն, դիպվածաբանություններ չենք դիտում, քանի որ դրանք մի ամբողջ պատմական ժամանակահատված, թեկուզև կարճատև, գործածվել են որոշ հասկացություններ արտահայտելու համար:

Միջին հայերենում եվրոպական փոխառությունների մեջ քանակական առումով աչքի են ընկնում հունական, իսկ գործածման հաճախականությամբ ֆրանսիական բառափոխառությունները: Դ. Աճառյանի «Դայոց լեզվի պատմություն» (հ. 2) գրքում արձանագրված է 70 ֆրանսիական փոխառություն, իսկ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» (հ. Ա) գրքում 108 հունական և 96 ֆրանսիական, «Միջին հայերենի բառարանում» 276 հունական և 106 ֆրանսիական բառամիավոր:

Միջին հայերենի ֆրանսիական փոխառություններին անդրադարձել է նաև Կ. Գրիգորյանն իր «Ֆրանսերենից փոխառված բառերը միջին հայերենում» առեմախոսության «Ֆրանսերենից փոխառված բառերը միջին հայերենում» գլխում: Դեղինակը որոշ ճշգրտումներ է մտցրել հիշյալ ցանկերում, որոնց հետ մենք հիմնականում համաձայն ենք: Այսպես օրինակ, *բրեֆեթ* և *բրոցեսիոն* գոյականները միջին հայերենի բառարանի հեղինակները դիտում են որպես լատինական բառափոխառություններ, մինչդեռ դրանք հայոց լեզու են ներթափանցել ֆրանսերենից, քանի որ փոխառված բառերը ծնով ավելի մոտ են դրանց ֆրանսերեն տարբերակներին, քան լատիներեն. *բրեֆեթ* < ֆրանս. *prefet* (լատ. *praefectus*), *բրոցեսիոն* (*բրսիսիոն*) < ֆրանս. *procession* (լատ. *processio*): Միսլլ է նաև *մանիստր* գոյականը դիտել որպես լատինական փոխառություն, քանի որ լատիներեն *g* գիրը [*g*] հնչյունը, չէր կարող տառադարձվել ճ-ով, մինչդեռ ֆրանսերեն [*dj*] հնչյունի ճ-ով գրադարձումը լիովին համապատասխանում է հայոց լեզվի ըննարկվող հատվածի հնչյունական կանոններին: Սակայն վերոհիշյալ ցուցակներում ֆրանսիական փոխառություն համարվող (հունական [*μυστα*] ծագում ունեցող) *մուսեդիար* ածականը ոչ մի կերպ չէր կարող միջին հայերեն ներթափանցել ֆրանսերեն լեզվի միջոցով: Եթե բառամիջի [*z*] ձայնեղ շփականի *ս*-ով գրադարձվելը կարելի է դիտել այդ հնչյունի իլացման արդյունք, ապա հնչյունափոխական ոչ մի կանոն չի կարող բացատրել [*k*]-ի դ-ով և հատկապես [*j*]-ի *ր*-ով տառադարձումը: Մեր կարծիքով այս բառը միջին հայերեն է թափանցել արաբերենից արաբ. *malisqar* > *մուսեդիար*: Այն ֆրանսիական փոխառությունների մեր ցանկում արձանագրված չէ: Ֆրանսիական փոխառություն համարվող *նոթար* գոյականը ևս նշված չէ մեր ցանկում, քանի որ փոխառվել է դեռևս V դարում հունարենից *νοταριος* < լատ.

*notarius* (Փավստոս Բուզանդի մոտ արդեն հանդիպում է *նոտարացի* գոյականը): Սեր ցանկում տեղ չի գտել նաև *բաւսթալիկօն* բառը, որի նշված փոխատու միավորը *apostolicum*, ոչ մի բառարանում մեզ չի հաջողվել գտնել: Միջին հայերենի բառարանի հեղինակների կողմից միջնորդական համարվող *ալաման* < թուրք. *alaman* < ֆրանս. *alaman* 1. «գերմանացի», 2. «գերմանական», բուքլա < թուրք. *bukle* < ֆրանս. *bucle* «ճարմանդ» և *փօստ* < թուրք. *post* < ֆրանս. *poste* «պաշտոն» բառերը, մեր կարծիքով, անմիջական փոխառություններ են: Համեմատելով այս բառերի հնչյունական ձևավորումները փոխատու և նշված միջնորդ ձևերում մենք հանգում ենք այն եզրակացության, որ վերջիններս հայոց լեզվի քննարկվող շրջան են մուտք գործել անմիջականորեն ֆրանսերենից:

Հունական փոխառությունների մեր ցանկում տեղ չեն գտել նշված ցանկերի *աթերայ*, *անթեմ*, *ապաղաս*, *առգեղ*, *աստոռդարոն*, *արքիտիագոնոս*, *բեթթիկա*, *գաղատոս*, *դիոպտոս*, *եթիա*, *եկէսիա*, *կաթլիկոս*, *կաղամբի*, *մաղաս*, *մետրոպոլիտ*, *պենտրակոստ* գոյականները, որոնք արձանագրված են եղել դեռևս V դարում. *անդլիտերին*, *ապահիւպատ*, *աստակոս*, *արտերի*, *բրաբիոն*, *գուռայ*, *գրամար*, *եղուստր*, *ենքեր*, *եպարքի*, *խալկին*, *մող*, *ուկի* և մի շարք այլ բառեր հանդիպում են VII–IX դդ. հեղինակների մոտ և այդ դարերից հասած արձանագրություններում: Սեր ցանկից դուրս է մնացել նաև *բաւսթիկին* գոյականը, որը միջին հայերեն է թափանցել պարսկերենից. *բաւսթիկին* < պրսկ. *bahstigin*:

Այսպիսով միջին հայերեն թափանցած հունական բառափոխառությունների մեր ցանկը բաղկացած է 300, ֆրանսիական փոխառություններինը 145 բառից: Որպես միավոր հաշվի են առնվել միայն արձատական ձևերը (նորակերտ բառերն առանձին միավորներ չեն դիտվում): Բառափոխառությունների մեծող մեծամասնությունը անմիջական են: Դրանց մի մասը միջին հայերեն է ներթափանցել գրական լեզվի միջոցով, մյուս մասն անմիջական չիման արդյունք է և միջին հայերեն է մուտք գործել ժողովրդախոսակցական լեզվի միջոցով: Հունական փոխառությունները միջին հայերեն են թափանցել հիմնականում գրական ճանապարհով. դրանց մեծ մասը տերմիններ են և վերաբերում են կրոնի, բուսաբանության և բժշկության բնագավառներին: Ֆրանսիական բառափոխառությունները միջին հայերեն են ներթափանցել հատկապես ժողովրդախոսակցական լեզվի միջոցով, որի վառ ապացույցն է դրանցից շատերի հնչյունափոխված, ինչպես նաև գուգահեռ ձևերի առկայությունը: Օրինակ *բուրժե* (պուրժե, պուռժե, պոռժե) < *bourgeois, bourgeois, bourjeis, bourjois, bourgeoisie* «բաղաբացի», *ըսպիտալ* (ոսպիթալ, ոսբիթալ, ոսպիտալ) < *hospital* «հյուրանոց, հոսպիտալ» և այլն: Այսպիսի տարբեր տառադարձումները պայմանավորված են նաև միջին հայերենի, հատկապես նրա հնչյունական համակարգի տարբերակմամբ, կարող են լինել գրչի սխալի հետևանք, երբեմն նաև գրաբարի ուղղագրությանը հավատարիմ մնալու միտում, կամ կախված են այն հանգամանքից, թե որ բարբառից է փոխառվել տվյալ բառամիավորը: Բակլա գոյականը, օրինակ, կատալոնյան բարբառից (*fave*) փոխառվել է *ֆավը* ձևով, հյուսիսային բարբառից (*feve*)՝ *ֆեվը*, կասկերենից (*have*)՝ *հաւը*:

ժողովրդախոսակցական լեզվի միջոցով միջին հայերեն մուտք գործած ֆրանսիական բառամիավորները երբեմն ավելի տարածված էին, մոտ ու հասկանալի բնակչության լայն խավերի շրջաններում, քան դրանց հայերեն համարժեքները կամ զրաբարից ավանդված, ավելի վաղ շրջանում կատարված փոխառությունները, որոնք արդեն ընկալվում էին որպես բուն հայկական արմատներ:

Միջին հայերեն ներմուծված հունական և ֆրանսիական բառափոխառությունների ձևաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը գոյականներ են, համեմատաբար սակավաթիվ են բայերն ու ածականները: Ներմուծված գոյականները միջին հայերենում ստացել են որոշիչ հոդ և հոլովվել ենթարկվելով հիմնականում *ի* արտաքին հոլովման:

Միջին հայերեն ներմուծված գոյականների ճնշող մասը, անկախ փոխառյալ բառի կազմությունից, ընկալվում է որպես պարզ բառամիավոր: Օրինակ *գուրդ, բլայթ, էլալու, կանայ* պարզ գոյականների համար որպես փոխատու միավորներ հանդես են եկել համապատասխանաբար *court, plaid, δάφνη, κάιννα* նույնպես պարզ գոյականները, *անդիլիպս, բրետիկադուր* բառերի համար *αντίληψις, predicateur* ածանցավոր գոյականները, *ըխտափոթ, իմիտետ-ռատու, հառնեզ, չինթիլոն* պարզ գոյականների փոխատու միավորներն են *οκτάετος, ημιτριταίος, harnais* ու *gentilhomme* կցական բարդությունները: Նույնիսկ մի քանի անգամ կրկնվող ածանցները, ինչպես, օրինակ *mariage* և *passage* գոյականների *-age* վերջածանցը, *αντίληψις, αντίθεσις, αντίδοσις* բառերում *αντί* – նախածանցը, որոնք պահպանվել են միջին հայերենում (*բաս-ած, մարի-ած, անդ-իլիպս, անթի-թոզիս* և այլն), որպես այդպիսին չեն գիտակցվում:

Ի տարբերություն գոյականների, որոնք այդքան մեծաքանակ են, բավականին փոքրաթիվ են բայերն ու ածականները: Միջին հայերենը հունարենից փոխառել է չորս, ֆրանսերենից ութ բայ (վերջիններից հինգը փոխառություն են հին ֆրանսերենից, երեքը միջին): Փոխառված բայերից 11-ը պատկանում են *ե* խոնարհման, մեկը *ա*, և խոնարհվելիս ենթարկվում են միջին հայերենի խոնարհման օրինաչափություններին: Նշենք դրանցից մի քանիսը *անոգանալ* < *ανα-γράφω* «կարդալ», *սայզել* < *saisir* (մ. ֆր.) «բռնագրավել», *ֆայլել* < *faillir* (հ. ֆր.) «դատը կորցնել, տանուլ տալ»:

Հունական և ֆրանսիական բառափոխառություններում արձանագրված է տասնութ ածականական փոխառություն. *դրաիդուր* < *traitor* «դավաճան», *ըկտիկոն* < *εκτός* «հյուսնոդ, թոքախտային», *ըրիպալտ* < *ribald, ribaut, ribault* «խարդախ», *հաստառ* < *hastat* «նիզակավոր», *պրոկոռ* < *προκολλος* «կաղ», *ռիժ* < *riche, rice, rike* «հարուստ», *տուալլ* < *double, doble, duble* «կրկնակի, կրկնակի չափով», *քիթ* < *quite, cuite* «ազատ, զերծ»: Փոխառված ածականները միջին հայերենում կորցրել են իրենց թվի և սեռի քերականական կարգերը: Միջին հայերենով ավանդված զրականության մեջ դրանք գործածվում են առանց որևէ բառակազմական փոփոխության: Վերոհիշյալ ածականներից երկուսը (*քիթ* և *տուալլ*) օգտագործվում են նաև որպես մակբայներ:

Կատարված փոխառությունները հիմնականում մենիմաստ բառեր են, բազ-

միմաստ բառերն այստեղ սակավաթիվ են: Նշենք դրանցից մի քանիսը. *ալապաստր* < *αλαβαστρον, αλαβαστρος*, 1. «լսնակուճ, ալաբաստր», 2. «ալաբաստրից պատրաստված անոթ յուղի կամ մետոնի համար», դամբլ (դամբլի) < *temple* 1. «տաճար», 2. «տաճարական ասպետ», դեկան < *δεκανιον, δεκανός* 1. «հոգևոր առաջնորդ, վանահայր», 2. «տասնապետ, ոստիկան, նվիրակ», երմուս < *Ερμης* 1. «Փայլածու» (մուլորակը), 2. «չորեքշաբթի», լիվր < *livre* 1. «դրամական միավոր», 2. «ծանրության չափ», ռեճիստր < *registre, régistre* 1. «մատենավար», 2. «մատենավարություն», պարոն < *baron* 1. «կիլիկյան շրջանում ազնվական կալվածատիրոջ տիտղոս, իշխան», 2. «մեծավոր, իշխանավոր, տեր», 3. «հարգական տիտղոս, որ գործածել են մեկին դիմելիս», պայլ < *bail* 1. «մեծ իշխան», 2. «կիլիկյան շրջանում պարոնի կամ իշխանի փոխանորդ», պացին < *bacine, bassine* 1. «կոնք, տաշտ», 2. «թաս», տֆրենդել < *defendre, defandre, defendre* 1. «պաշտպանել», 2. «արգելել», րոտել < *ερωταω* 1. «փնտրել», 2. «խնդրել, աղաչել»:

Գունարենից և ֆրանսերենից փոխառված բառամիավորները, ենթարկվելով հայերենի բառակազմական կանոններին, կազմել են նոր բառեր հարստացնելով միջին հայերենի բառապաշարը: Մի շարք գոյականներ – *ուբին*, –*ուր*, –*ցի*, վերջածանցների միջոցով կազմել են նոր գոյականներ. *գուենդ* (*comité*) + *ուբին* ⇒ *գուենդուբին* «կոմսություն», *լիճ* (*lige, liege*) + *ուբին* ⇒ *լճուբին* «վասալություն», *մարզիզ* (*marchis*) + *ուբին* ⇒ *մարզիզուբին* «մարզիզի տիտղոսը», *մարզիզ* + *ուհի* ⇒ *մարզիզուհի* «մարզիզի կինը դուստրը», *պայլ* (*baile*) + *ուբին* ⇒ *պայլուբին* 1. «պայլի պաշտոնը աստիճանը», 2. «խնամատարություն», 3. «իշխանություն», *ջանցլեր* (*chancelier*) + *ուբին* ⇒ *ջանցլերուբին* «կանցլերություն», *անսիզ* (*assises*) + *ուր* ⇒ *անսիզուր* «իրավատեր»: *Ան* – նախածանցի միջոցով *լիճ* (*lige, liege*) «վասալ, ավատառու» և *դիաթիկ* (*βια-θήκη*) «կտակ» գոյականներից կազմվել են *անլիճ* «անենթակա» և *անդիաթիկ* «անկտակ» ածականները: *Կալոսփել* (*καλοσπελ*) (*galoper, galopper*) «քառասնթակ վազել, նաև վազեցնել» բայից –*ցն*– պատճառական ածանցի միջոցով ստեղծվել է *կալոսփցնել* «վազեցնել» պատճառական բայը. *ջալունջ* (*chalonge*) «զանգատ», *սինոն* (*συν-ορος, συνουρος*) «սահման» գոյականներից և *տուպլ* (*double, double, double*) «կրկնակի» մակբայից –*ել*– բայական վերջավորության միջոցով կերտվել են *տըպլել* «կրկնակի չափով վճարել հատուցել» և *սինոնել* «սահմաններ որոշել հաստատել», *ջալընջել* «զանգատվել» և խոնարհման բայերը (վերջինս իր հայերեն «զանգատվել» հոմանիշից տարբերվում էր նրանով, որ հանդես էր գալիս բացառապես որպես իրավաբանական տերմին): *Սինոն* < *συν-ορος, συνουρος* «սահման, սահմանագիծ» գոյականը *կից* և *պահ* արմատների միջոցով կերտել է *սինոն(ա)պահ*, սահմանապահ և *սինոնկից* «սահմանակից, հարևան» բառերը: *Մելան* < *μελαν* «թանաք» գոյականից *առ*, *զիծ* և *ծուկ* արմատների միջոցով կազմվել են *մելանառ* «թանաքաման», *մելանազիծ* «թանաքով գրված գծված», *մելանածուկ* «ծկան տեսակ» նորամիավորները: *Պարոն* < *baron* «իշխան» բառը եվրոպական փոխառությունների մեջ ամենաարգասավորն էր, այն տարբեր ածանցների և արմատների միջոցով կազմել է 11 նոր բառամիավոր. *պարոնուբին* «իշխանութ-

յուն», պարոնանալ «պարոն դառնալ», պարոնորդի «պարոնի որդի», պարոնիկ «երիտասարդ պարոն», պարոնապապ «սկեսրայր», պարոնամայր «սկեսուր», պարոնացավ «հողատապ, պողազրա», պարոնուհի, պարոնադուստր, պարոնացնել, պարոնտեր «հարգական տիտղոս պարոն կամ տեր նշանակությամբ, որ տրվում է անվանի, մեծահարուստ մարդկանց»:

Փոխառությունները միշտ չէ, որ պահպանել էին փոխատու բառի իմաստը. դրանք փոխառվելիս ստացել են նոր իմաստներ, որոնք, իհարկե, որոշակիորեն առնչվում էին փոխատու բառի բուն իմաստի հետ: *Բրվենդ* «հոգևորականի եկամուտ» բառը փոխառվել է *provende, probende, prouvende* գոյականից, որը, բացի հայերեն փոխանցված իմաստից, ունեցել է նաև «կերակուր, սնունդ» իմաստը: *Շոխպալտ* ածականի փոխատու *ribald, ribaud* ածականը ֆրանսերենում նշանակել է «անառակ անբարոյական մարդ», միջին հայերենում ինչ-որ չափով տեղի է ունեցել բառիմաստի նեղացում, այս բառը գործածվել է միայն «խարդախ» իմաստով: *Մնուր* «ֆրանցիսկյան կրոնավոր» գոյականի փոխատու բառը նա ածական է *mineur* «կրտսեր, փոքր»: *Պրոպատիկե* «ավագան» գոյականը փոխառվել է *προβατικη* «ոչխարի» ածականի: Մեր կարծիքով այն նշել է մի տեղ, ուր լողացնելու կամ ջուր խմելու են բերել ոչ-խարնբըր. *Ղուսպինա* «դժվարություն» գոյականը, փոխառվելով *δυσ-τατης* «չափազանց կեղտոտ» ածականից, անցել է իմաստային յուրացման հետևյալ ուղին. *չափազանց կեղտոտ* ⇒ *խոթին, դժվարանց* ⇒ *դժվարություն*:

Հայոց լեզվի քննարկվող շրջան թափանցած հունական և ֆրանսիական փոխառությունների մեծ մասը չմերվեց, չկայունացավ հայոց բառազանձում, այն դուրս եկավ գործածությունից իր տեղը զիջելով հայերեն համարժեքին: Դրանց չնչին քանակությունն է միայն պահպանվել ժամանակակից հայերենում: Նշենք դրանցից մի քանիսը. ազաթ (հուն.), նարդոս (հուն.), մաստակ (հուն.), պարոն (ֆր.), պատրոն (ֆր.), սուլեր (ֆր.), սուկնոց, սուկար, սալամանդր (հուն.) և այլն:

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միջին հայերենում հունարենից և ֆրանսերենից մուտք գործած փոխառություններին աշխարհաբարում փոխարինել են կամ գրաբարյան համարժեքները, որոնք հաճախ ավելի վաղ շրջանի փոխառություններ էին, սակայն այլևս որպես այդպիսիք չէին դիտվում, կամ ավելի ուշ շրջանում կատարված փոխառություններ. *անսիզ* < *assises* > «օրենք» (պահլ.), *ապօտիկս* < *απτό-δεξίς* > «մուրհակ» (պահլ.), *բուրժե* < *bourgeois* > «քաղաքացի» (ասոր.), *բրինձ* < *prince* > «իշխան» (իրան.), *զունց* < *cuens* > «հյուպատոս» (հուն.), *ըմբրուր* < *emperur* > «կայսր» (հուն.), *զխօլաստիկոս* < *σχολαστικος* > «հոգևոր» (հուն.), *ջանուն* < *chanoine* > «կանոնիկոս» (հուն.), *տֆընդել, տֆընտել* < *defendre* > «պաշտպանել» (պահլ.), *ջարրուն, ջարրոն* < *chaperon* > «վեղար» (բյուզ.), *պարն, պօրն* < *borne* > «սահման» (պահլ.), *ջարմ* < *charme* > «կախարդանք», (իրան.), *փսաղտոս* < *ψάλλος* > «դպիր» (պահլ.) և այլն:

## ЗАИМСТВОВАНИЯ ИЗ ГРЕЧЕСКОГО И ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКОВ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Наши исследования лексики армянского языка свидетельствуют о том, что хотя и европейские заимствования по количеству уступают арабским, персидским и турецким, их влияние на словарный состав армянского, особенно, среднеармянского языка, велико. В исследуемом периоде количество заимствованных слов из европейских языков составляет 679 единиц.

По своему значению в среднеармянском языке европейские заимствования классифицируются следующим образом: заимствования, которые были необходимы языку в данном периоде, и ненужные заимствования.

В среднеармянском языке в количественном отношении выделяются заимствования из греческого языка, а по частоте употребления — из французского. Подавляющее большинство этих заимствований — это прямые заимствования. Часть их проникла в среднеармянский язык посредством литературного языка, другая часть — результат непосредственного общения, она вошла в среднеармянский язык через разговорный язык. Греческие заимствования проникли в среднеармянский язык, в основном, литературным путем, и большинство из них — это термины, относящиеся к религии, ботанике и медицине. Французские заимствования вошли в среднеармянский язык благодаря разговорному языку, ярким доказательством чего является наличие как фонетически измененных, так и параллельных форм этих заимствований.

Морфологический анализ проникших в среднеармянский язык греческих и французских заимствований показывает, что большая их часть — это имена существительные, относительно немногочисленную группу составляют глаголы и имена прилагательные.

M. Khazaryan

## ASSIMILATION OF BORROWINGS FROM GREEK AND FRENCH LANGUAGES IN MIDDLE ARMENIAN LANGUAGE

Our researches of vocabulary of Armenian language show that even if the European borrowings concede Arabian, Persian, and Turkish languages in quantity, however their influence on vocabulary of Armenian, particularly Middle Armenian language, is big. In the researched period, number of words borrowed from European languages comprise of 679 units.

In its meaning, the European borrowings for the Middle Armenian language are classified by the following types: borrowings which were needed for the language in the certain period and borrowings which were not needed.

In the Middle Armenian, it is observed that the borrowings from Greek language are remarkable by quantity and from French language by frequency of use. Overwhelming majority of these borrowings are direct borrowings. Part of them penetrated in the Middle

Armenian language with the help of the literary language, and the other part as a result of direct communication and they passed into the Middle Armenian through spoken language. The Greek borrowings got to the Middle Armenian, in general, by literary way, and in most of cases those are terms related to religion, botany, and medicine. French borrowings were carried onto the Middle Armenian because of spoken language, and its glaring example is presence of phonetically changed forms of the borrowings and their parallel ones as well.

Morphological analysis of the Greek and French borrowings got to the Middle Armenian prove that their major part are nouns. Relatively small group consists of verbs and adjectives.

